


**ԵՐԴՈՒՄ ԸՆԵԼՈՒ ՅՈՒԻ  
ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Յոռի բոլոր սովորութիւնները, ուր ալ ըլլան անոնք վատ են, բայց երգումը աւելի վատ մոլորութիւն է եւ անօրէն սովորութիւն մըն է: Սատանան այնքան կը յիմարեցնէ այս սովորութեան մոլորութեան մէջ, որ այս սովորութեան ընտելանալով՝ այլեւս չարիքը չարիք չի թուիր: Այսպէս, կը տեսնենք շատեր, որոնց Սատանան սորվեցուցած է անօրէն կերպով երգում ընել եւ անոնցմէ ո՛չ ոք իր սրտին մէջ անօրէն մեղք մը գործած ըլլալու երկիւղը ունի: Թէեւ Հին Կտակարանի մէջ [Սատուած] ըսած է. «Քու Տէր Աստուծոյդ միայն պիտի երգնու» (Բ. Օրինաց 6:13), սակայն ասով երգում կատարելու հրամանը չհաստատեց, այլ՝ ուզեց անոնց տղայական միտքերը կռուփելու անունով երգում կատարելէ հեռացնել: Արդարեւ, անոնք անմիջապէս չէին կրնար բոլոր կատարելութիւնները ընդունիլ, այլ գանձնէ կ'ընտելացնէր այնպէս, ինչպէս կ'ընտելացնէին անվարժ աւանակները: Եթէ ըսէր՝ «Բնաւ երգում մի ընէք», թերեւս չերգուէին: Եթէ պիտի երգնում, Տէր Աստուծոյն պիտի երգնում: Իսկ Նոր կտակարանին մէջ Քրիստոս կատարելութեան հասած հրամաններ պատուիրեց եւ բոլորովին ջնջեց սատանայական երգումները: «Մովսէս կ'ըսէ. սուտ երգում մի՛ ընէր: Իսկ ես կ'ըսեմ ձեզի՛ բնաւ երգում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ, որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ, որովհետեւ անոր ոտքին պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ, որովհետեւ մեծ Թագաւորին՝ Աստուծոյ, փառքն է եւ ոչ ալ քու գլխուդ վրայ երգում ըրէ, որովհետեւ չես կրնար մագ մը իսկ ներմկցնել կամ սեւցնել» (Մտք 5: 33-36):

Ա.Մ.ԷՆ

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ՊԱՏԱՐԱԳ**



**ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄԸ  
2.- Պատրաստութիւն ընծաներուն  
Բ.- ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆ**

Այս բաժինը Ս. Պատարագի առաջին մասն է, որ կը կոչուի նաեւ Երախայից Ս. Պատարագ: Անցեալին անոնք՝ որոնք չէին մկրտուած, այսինքն՝ երեխաներ էին եւ սպաշխարութեան մէջ գտնուողներ, կրնային ներկայ ըլլալ միայն Ս. Պատարագի այս բաժինին:

Ճաշու Ս. Պատարագը նախապատրաստութիւնն է Բուն Ս. Պատարագին: Այս բաժինն մէջ է, որ հաւատացեալներ հոգեպէս կը պատրաստուին մասնակից դառնալու զոհաբերման Ս. Խորհուրդին:

Առաջին հերթին, դպիրներ կ'արտասանեն ատուր պատշաճի ժամամուտը, ապա կ'երգեն ճաշու շարականը: Ժամամուտ ու ճաշու... Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ԱՊՐԻԼ 2024

ԹԻԻ 14

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
Սղ. 3.1-2: Բ. Կր. 6.16-7.1: Ղկ. 1.26-38**

**ՆՈՐ ԿԻՐԱԿԻ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ) ՏՕՆ ԱՒԵՏՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԾԱՇՆԻՆ  
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 1.26-38**

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր, որ Աստուած ամէն ինչ ստեղծեց: Առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է, որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ դրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով:


Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը: Փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:

Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով. «Ասիկա է ան՝ որուն մասին կ'ըսէի. «Ան որ ինձմէ առաջ գոյութիւն ունէր»:

Անոր լիառատ շնորհքն է, որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)



Ս. Զատիկի յաջորդող Կիրակին կը կոչուի Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ: Յիսուս, իր յարուլթենէն յետոյ յաճախակի առիթներով երեւցաւ իր աշակերտներուն: Յարուլթեան ուլթերորդ օրը, Յիսուս դարձեալ երեւցաւ անոնց: Այնտեղ էր, նաեւ Թովմաս առաքեալը, որ Յարուլթեան օրը չէր տեսած Տէրը եւ ըսեր էր. «Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն տեղերը եւ ձեռքս չդպցնեմ Անոր կողին, չեմ հաւատար» (Յովհ. 20.25): Յիսուս կը հրաւիրէ Թովմասը, որ իր ձեռքերը կողին մէջ խրէ եւ շօշափէ: Բայց ան միայն կը բացագանչէ՝ «Տէ՛րս եւ Ա՛ստուածս»:

Յիսուս կ'ըսէ անոր. «Զիս տեսնելուդ համար հաւատացիր, չէ՞: Երանի՛ անոնց, որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան»: Եկեղեցին, այս յիշատակը կը տօնէ, որպէս նաւակատիք Զատիկի: Յոյները Նոր Կիրակին կը կոչեն ԹՈՎՄԱՅԻ ԿԻՐԱԿԻՆ:

Կիրակի կամ Կիւրակէ յունարէն բառ է, որ կը նշանակէ Տէրունի օր: Սկզբնական շրջաններուն տարածած չէր Կիրակի բառը, այլ՝ կը գործածուէր Միաշարաթ անունը, որպէս շարթուան առաջին օրը, երբ Քրիստոս յարուլթիւն առաւ մեռելներէն: Յետագային է, որ Միաշարաթի փոխարէն տարածուեցաւ յունարէն Կիրակի բառը:

Կիրակի օրուան համար Առաքելական 34 կանոններու երկրորդը հետեւեալ հրահանգը կու տայ. «Բոլոր Կիրակի օրերը տօն կ'ըլլայ եւ պատարագ կը կատարուի, կը կարդացուին մարգարէական Գիրքեր եւ առաքելական Նամակներ, եւ ապա կը կարդացուի Ս. Աւետարան»:

Քրիստոնեաներուն համար Կիրակի օրը հանգստեան օր է: Սակայն սիրելի ընթերցող, հանգիստը տունին մէջ ամբողջ օրը հանգիստ ընել չէ, ոչ ալ մինչեւ ուշ ժամեր քնանալ: Տիրիքական հանգիստէն աւելի կարեւորը հոգիի հանգստութիւնն է: Եւ այդ հանգստութիւնը կը զգանք պատարագի մասնակցութեամբ, աղօթքով: Կիրակին չ'անցնենք քնանալով կամ դատարկ գործերով, այլ՝ աղօթքով: **ՆՈՐ ԿԻՐԱԿԻ**

Զատիկուան յաջորդող Կիրակին է: Յայտնի է, որ Քրիստոսի յարութեամբ միաշարաթ օրը նուիրագործուեցաւ եւ դարձաւ Կիրակի, ուստի անոր յաջորդող միաշարաթը կոչուեցաւ Նոր Կիրակի կրկնագատիկ՝ Կրկին Զատիկ: Նոր Կիրակին կը խորհրդանշէ Քրիստոսի եկեղեցւոյ հաստատման եւ ծաւալման սկիզբը:

# Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

## ՈՒՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ ՄԵԾ ԼՈՅՍԸ ԿԵԱՆՔԻՂ ՄԷՉ

Այն ժողովուրդը որ խաւարի մէջ կ'ապրէր, մեծ լոյս մը տեսաւ (Մտ. 4.16): Մատթէոս Աւետարանիչ մէջբերելով Եսայի մարգարէին այս խօսքը, կ'ուզէ ցոյց տալ մեզի, թէ Յիսուս ծնաւ, որպէսզի դառնար լոյսը աշխարհին: Յիսուսի ծնունդը երկնային լոյսին ծնունդ էր երկրի վրայ: Յիսուսի ծնունդը աստուածային լոյսին մարդեղացումն էր մարդկութեան կեանքին մէջ: Մարգարէն այդ լոյսը կը կոչէ մեծ լոյս: Այդ լոյսը կը կոչուի «մեծ լոյս», որովհետեւ ճշմարիտ լոյսն է, մարդկութիւնը մեղքի խաւարէն ազատագրող լոյսն է: Մեծ էր Քրիստոսով յայտնուած լոյսը, որովհետեւ դարձաւ փրկութիւնն ու կեանքը աշխարհին: Մեծ էր, որովհետեւ թափանցեց մարդուն ամբողջ էութիւնը եւ ջերմացուց զայն:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Մենք ունի՞նք այդ մեծ լոյսը մեր սրտին մէջ: Քրիստոսի լոյսն է, որ մեզ կ'առաջնորդէ մեր առօրեային ընդմեջէն՝ դէպի յաւիտենականութիւն: Առանց այդ մեծ լոյսին՝ չենք կրնար մեծնալ: Առանց այդ յաւերժ լոյսին՝ յաւերժ խաւարին բաժինը պիտի դառնանք:

## ՕՐԿԵՆԱԼ Ե ԱՍՏՈՒՎԾ

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

## ԵԹԷ Կ'ՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿ ԱՆՀԱՐԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ, ԱՆՈՐ ԱՐՄԱՏԸ ԵՂՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՐ ՎԱՍՏԱՃԵՆԸ Կարդա՛ր՝ ՍԱՂՄՈՍ 14

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներուն մէջ ինկան, չկայ մէկը որ բարին գործէ: ՏԷՐԸ երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամենքն ալ խտտրեցան եւ մոլութեան գիրկը ինկան: Չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք խելքի պիտի չգա՞նք բոլոր անոնք, որոնք չարիք կը գործեն: Անոնք, որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս, եւ ՏԻՐՈՉԸ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ ՏԷՐԸ զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

Չարագործները աղքատին խորհուրդները կը հեզմեն, բայց ՏԷՐԸ ի՛նքն է անոր ապաւէնը: Ո՛հ տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ: Երբ ՏԷՐԸ ետ դարձրնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

## ԱՄԷՆ ՕՐ ԲԱՆԱՆՔ ՄԵՐ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՄԷՋԷՆ ՄԵՐ ԱՂՕԹՔԸ ԿԱՏԱՐԵՆՔ ԱՌ ԱՍՏՈՒՎԾ